«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

Ն ԳԲԽ-39/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի կողմից 14.11.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 14.11.2014թ. ներկայացված բողոքով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն)

հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 01.10.2014թ. հայտարարված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված թիվ 5), գնի առաջարկ (հավելված թիվ 5.1) և գնման ժամանակացույց (կնքվելիք պայմանագրի հավելված թիվ 2):

Ընկերությունը հայտնել է, որ գնի առաջարկում թույլ է տվել վրիպում՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի վերաբերյալ սխալմամբ պայմանագրի կատարման համար առաջարկվող գին է նշել ձեռքներվող ապրանքի մեկ միավորի արժեքը, իսկ գնման ժամանակացույցին վերաբերող թիվ 2 հավելվածում պայմանագրի կատարման համար առաջարկված գինը ճիշտ է լրացրել: Վրիպակի մասին «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն իմացել է 01.10.2014թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ից: Ընկերությունը վրիպակի վերաբերյալ 01.10.2014թ. դիմում է ներկայացրել «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և խնդրել է 1-ին չափաբաժնին «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի մասնակցությունը չքննարկել կամ քննարկել ճիշտ հաշվարկով՝ կցելով նաև ապրանքի ձեռքբերման փաստաթուղթ՝ տրված մատակարարի կողմից Ընկերությանը (Quatation/ Proforma Invoice # SB00-000870), որում հստակ երևում է ապրանքի ձեռքբերման գինը, ինչը գերազանցում է գնի առաջարկում (հավելված թիվ 5) թիվ 1 չափաբաժնի համար նշված արժեքը:

Ընկերությունը նշել է, որ տվյալ գնով ապրանքի վաճառքը «Ջի Վի Էն» ՍՊԸ-ին ակնհայտ վնաս է պատճառում: Բացի այդ, ապրանքը հասցնելով գնորդին, Ընկերությունը կատարելու է նաև տրանսպորտային, մաքսազերծման, առաքման և այլ ծախսեր, ինչն ակնհայտ կկրկնապատկի Ընկերությանը պատճառվող վնասը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. հոկտեմբերի 9-ի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշմամբ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար հաղթող է ճանաչվել «Կոմպասս» ՍՊԸ-ն, իսկ 2014թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հաղթող է ճանաչվել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը վերոգրյալից եզրակացրել է, որ առաջին դեպքում (արձանագրություն թիվ 3) բավարարվել է 1-ին չափաբաժնի «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի մասնակցությունը չքննարկելու կամ ճիշտ հաշվարկով քննարկելու դիմումը, իսկ երկրորդ դեպքում (արձանագրություն թիվ 4) Ընկերությունը 1-ին չափաբաժնի համար ճանաչվել է հաղթող՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 45-իդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պայմանագիր կնքելու մասին որոշումը կայացրել է 10.11.2014թ.:

Ընկերությունը բողոքում նշել, որ հանձայն չէ գնահատող հանձնաժողովի 1-ին չափաբաժնի վերաբերյալ կայացրած որոշման հետ և այդ կապակցությամբ, ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերով, ներկայացրել է բողոք:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է նաև, որ Պատվիրատուի խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ընկերությունը հայտնել է նաև, որ բազմաթիվ անգամ մասնակցել է ընթացակարգերի և պատշաճ կատարել է իր պարտավորությունները՝ կապված գնումների գործընթացի հետ: Ընկերությունը չի հրաժարվում կատարել իր

պարտականությունները, սակայն հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Ընկերությունն առաջին իսկ հնարավորության դեպքում հայտնել է գնահատող հանձնաժողովին գնի առաջարկում տեղ գտած վրիպակի մասին, իսկ տվյալ իրավիճակում հաղթող ճանաչելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ին, ներկայացված մեկ միավորի գնային առաջարկի դեպքում Ընկերությունն անհիմն կերպով կկրի մեծ վնասներ և կխախտվեն Ընթացակարգի անցկացման բոլոր սկզբունքները:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն խնդրել է բավարարել բողոքը և չեղյալ համարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը և 1-ին չափաբաժնով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համարել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

<u>2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ը 20.11.2014թ. N 09/2988 գրությամբ հայտնել է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 03.11.2014թ. 35/14 որոշմամբ դադարեցվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը չքննարկելու և նույն արձանագրության 3-րդ կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից

ճանաչելու մասերով, կայացրած որոշումները: Կատարելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 03.11.2014թ. 35/14 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը քննարկել է «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը և, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 1-ին հավելվածի 56-րդ կետով, 10.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշմամբ, Ընթացակարգի 1-ին չափաբաժնով հաղթող է ճանաչել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ և երրորդ տեղ զբաղեցնող մասնակիցներ է ճանաչել համապատասխանաբար՝ «Կոմպասս» և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերություններին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն առաջարկել է չդադարեցնել «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը և «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը մերժել:

3. ԳԲԽ-39/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 14.11.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած 20.11.2014թ. N 09/2988 գրությունը և կից փաստաթղթերը, «ՇՀԱՊՁԲ-11/12-7-(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 03.11.2014թ. 35/14 որոշումը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-39/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքա-

վորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցել են «Ֆիրմա Ալֆա», «Ջի Վի Էն», «Կոմպասս» և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունները:

2. «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած գնային առաջարկում նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է 1-ին չափաբաժնով պայմանագիրը կատարել գնային առաջարկում նշված գնով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.10.2014թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝

- 2.2-րդ կետով որոշում է կայացրել չքննարկել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը՝ կից ներկայացված գնի հաշվարկում առկա անհամապատասխանությունների պատճառով:
- 3-րդ կետով որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին:

4. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 03.11.2014թ. 35/14 որոշման համաձայն՝ դադարեցվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2014թ. թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը չքննարկելու և նույն արձանագրության 3-րդ կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար որպես առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչելու մասերով կայացրած որոշումները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2014թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 03.11.2014թ. թիվ 35/14 որոշումը, հրավիրել է արտահերթ նիստ:

Վերոնշյալ արձանագրության 1-ին կետով գնհատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՇՀԱՊՁԲ-11/12-7 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին, 3-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին:

4. ԳԲԽ-39/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

Կարգի 110-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատելիս, ենթակա են գնահատման վերջիններիս ներկայացրած ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը, իսկ 1-ին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Տվյալ դեպքում, ելնելով 1-ին տեղն զբաղեցրած մասնակցին նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների թվից որոշելու սկզբունքից, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշմամբ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ին ճանաչել է որպես գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով հաղթող՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից, նկատի ունենալով, որ վերջինիս պայմանագրի կատարման համար առաջարկած գինը մյուս մասնակիցների առաջարկած գների համեմատությամբ եղել է նվազագույնը:

Ընկերության բերած փաստարկն այն մասին, որ գնային առաջարկում սխալմամբ 1-ին չափաբաժնի համար լրացվել է գնման առարկայի մեկ միավորի արժեքը, սակայն կնքվելիք պայմանագրի թիվ 2 հավելվածում՝ գնման ժամանակացույցում, պայմանագրի կատարման համար առաջարկված գինը ճիշտ է լրացրել, ապա նշված փաստարկը չի կարող հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու համար, քանի որ Ընկերությունը գնային առաջարկը ներկայացնելիս հաստատել և հավաստել է, որ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով պայմանագիրը կատարելու է գնային առաջարկում նշված գնով, ինչը Կարգի 56-րդ կետի համաձայն, համարվում է մասնակցի կողմից պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումար և այն որևէ կերպ չի կարող դիտվել որպես ձեռքբերվող առարկայի մեկ միավորի արժեք, իսկ Կարգի 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, այլ մանրամասներ չեն պահանջվում և չեն ներկայացվում:

Ինչ վերաբերվում է Ընկերության ներկայացրած՝ “Athar e-commerce solutions” ընկերության 30.09.2014թ. գրությանը, ապա այն կազմված է օտար լեզվով և չի հանդիսանում ապրանքի ձեռքբերման փաստաթուղթ:

Բացի այդ, շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում Կարգի 110-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով առաջին տեղն զբաղեցրած մասնակցի վերաբերյալ որոշումը կայացնելիս, հիմք է ընդունվում միայն մասնակցի ներկայացրած գնային առաջարկը, որպիսի փաստաթուղթը գնահատելիս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնով հաղթող է ճանաչել «Ջի Վի Էն» ՍՊԸ-ին:

Նկատի ունենալով, որ գնահատող հանձնաժողովի 10.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի առաջարկում ենք «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 14.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-39/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան